ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.	Անունը, ազգանունը	Աշոտ Հարությունյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
3.	Գործուղման վայրը և ժամկետը	Իրանի Իսլամական Հանրապետության մայրաքաղաք Թեհրան, 2018թ. մարտի 4-6-ը
4.	Հրավիրող կողմը	ԻԻՀ գյուղատնտեսության Ջիհադ նախարարություն
5.	Գործուղման նպատակը, աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	ԻԻՀ գյուղատնտեսության նախարար Մ. Հոջաթիի 2017թ. մայիսին Հայաստան կատարած այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածության, ինչպես նաև առևտրատնտեսական հարցերով Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջկառավարական 15-րդ համատեղ հանձնաժողովի 2018թ. փետրվարի 27-ին Երևանում կայացած համատեղ նիստի Փոխըմբռնման հուշագրում ամրագրված հանձնարարությամբ՝ 2018թ. մարտի 5-6-ը Թեհրանում կայացել է գյուղատնտեսության բնագավառում համագործակցության հայ-իրանական աշխատանքային խմբի առաջին հանդիպումը: Աշխատանքային խմբի իրանական կողմը ղեկավարում էր ԻԻՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ, Իրանի ձկնարդյունաբերության կազմակերպության տնօրեն Հասան Սալեհին: Աշխատանքային խմբի համատեղ նիստի նպատակն էր՝ երկկողմ համագործակցության զարգացմանն ուղղված հարցերի քննարկումը, համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունների ուսումնասիրումը, երկկողմ փոխշահավետ կապերի հաստատումը:
6.	Քննարկված թեմաները	Աշխատանքային խմբի հանդիպման ընթացքում քննարկվել են գյուղատնտեսության բնագավառում նորագույն տեխնոլոգիաների ներդրման, փորձի փոխանակման ու գիտական ոլորտներում համագործակցության հնարավորությունները և Իրանից Հայաստան պարարտանյութերի ներկրման հարցեր:

		Քննարկվել են նաև բուսաբուծությանը, անասնաբուծությանը և ձկնաբուծությանը վերաբերող հարցեր, մասնավորապես հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի չորադիմացկուն սորտերի փոխանակման, բանջարաբուծական և պտղաբուծական առաջավոր տեխնոլոգիաների իրանական փորձի ուսումնասիրման հարցեր, ԻԻՀ-ում իրականացվող տոհմա-սելեկցիոն աշխատանքների կազմակերպման ուղղությունները:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված քննարկված հարցերը	Հանդիպում է կայացել ՀՀ գյուղատնտեսության նախարար Աշոտ Հարությունյանի և ԻԻՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Հասան Սալեհիի միջև: Կողմերը նշել են մեր երկրների միջև գյուղատնտեսության բնագավառում առկա ներուժը և նշել համատեղ ջանքերով առավել արդյունավետ երկկողմ համագործակցություն ծավալելու անհրաժեշտությունը: Կարևորվել է նաև երկու երկրների գործարարների ներգրավումը գյուղատնտեսության բնագավառի տարբեր ծրագրերում, նշվել է նաև Հայաստանի Հանրապետության Եվրասիական տնտեսական միության անդամ լինելու հանգամանքը, որով պայմանավորված, իրանական կողմը հնարավորություն կունենա Հայաստանի տարածքով դեպի ԵՏՄ շուկա արտահանել իրանական գյուղատնտեսական ապրանքներ: Պատվիրակությունը այցելել է նաև ԻԻՀ-ում Հայաստանի Հանրապետության դեսպանություն և հանդիպել արտակարգ և լիազոր դեսպան Արտաշես Թումանյանի հետ: Հանդիպման ընթացքում Աշ. Հարությունյանը ներկայացրել է աշխատանքային խմբի համատեղ նիստի արդյունքները և հանգամանորեն տեղեկացրել երկկողմ համագործակցության ուղղությունների մասին: Դեսպան Ա. Թումանյանը իր հերթին պատրաստակամություն է հայտնել աջակցություն ցուցաբերել փոխշահավետ կապերի հաստատմանը:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները,	Աշխատանքային խմբի հանդիպման արդյունքում կազմվել է արձանագրություն: Առաջարկվել է 2018թ. ընթացքում երկու երկրների ագրոարդյունաբերական գործարարների առաջին հանդիպումը կազմակերպել Հայաստան-

	պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	Իրան սահմանին՝ Մեղրու ազատ տնտեսական գոտու տարածքում:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Աշխատանքային խմբի հանդիպման արձանագրությամբ ամրագրված կետերի իրագործման, արդյունավետ համագործակցության ապահովման նպատակով կողմերը պատրաստակամություն են հայտնել մշակել երկու նախարարությունների միջև համագործակցության Փոխըմբռնման հուշագրի նախագիծ, որը կստորագրվի երկու երկրների գյուղատնտեսության նախարարների մակարդակով:
10.	Գործուղվողները	ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյան, ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Անդրանիկ Պետրոսյան, աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ Ռուդիկ Նազարյան, աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության պետ Լևոն Տեր-Իսահակյան:
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	13.03.2018թ.